ԳՈՐԾԵԼ Է ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԲՆԱԶԴԸ

թյունն ու բուհերի ռեկտորներն են: Ուստի անհանգստություն էր արտահայտվում, որ ակադեմիան շուտով կարող է վերածվել պաշտոնից հեռացածների «հանգստյան տան»:

Խոստովանենք, որ նման վտանգ իսկապես գոյություն ուներ, քանի որ վաստակ ունեցող, տաղանդավոր գիտնականներից շատերն ընդհանրապես չէին առաջադրել իրենց թեկնածությունը:

Սակայն, ինչպես ցույց տվեցին դեկտեմբերի 27-28-ի քվեարկության արդյունքները, առաջին ու մանավանդ երկրորդ փուլերում «ջնջվածների» մեծ մասը հենց վերոնշյալ պաշտոնյաներն ու ռեկտորներն էին: Հետեւաբար հասարակայնության իրավացի մտահոգությունը հաշվի առնվեց ակադեմիկոսների կամ, ինչպես մեր գրչընկերներն են գրում, «ծերակույտի» կողմից:

Սուբյեկտիվիզմի հսկայական բեռ կա մանավանդ «Առավոտում» լույս տեսած Գոհար Հակոբյանի

զույգ հրապարակումներում, որոնք վերաբերում են հայագիտության ու հասարակական գիտությունների բաժանմունքում տեղի ունեցած քվեարկությանը: Սա ցույց է տալիս, որ հեղինակը բացարձակապես անտեղյակ է ինչպես տեղի ունեցած քվեարկության «հետնախորքին», այնպես էլ առանձին թեկնածուների հնարավորություններին:

Անշուշտ կարելի է համաձայնել այն դիտարկմանը, որ մի շարք թեկնածուներ, այդ թվում անվանի պատմաբան Բաբկեն Հարությունյանը եւ արվեստաբան Լեւոն Չուգասզյանը միանգամայն արժանի էին, բայց չընտրվեցին համապատասխանաբար ԳԱԱ իսկական եւ թղթակից անդամներ: Այո՛, դա այդպես է, բայց հստակ է նաեւ, որ, օրինակ, պատմության գծով թղթակից անդամ է ընտրվել առաջադրված թեկնածուներից լավագույնը՝ Ալբերտ Խառատյանը, արեւելագիտության գծով՝ Ռուբեն Սաֆրաստյանը: Այս ցանկը կարելի է շարունակել...

Իսկ ինչ վերաբերում է նույն՝ պատմության գծով ակադեմիայի իսկական անդամի չընտրվելու փաստին, ապա այստեղ «աշխատել է» չարիքից փոքրագույնի սկզբունքը, քանզի եթե ակնհայտ հովանավորության պարագայում ընտրվեր առավելագույն ձայներ ստացած ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, ապա, ինչպես համոզված պնդում են այդ բնագավառին քաջատեղյակ մասնագետները, դա կլիներ առանց այդ էլ բարդ վիճակում գտնվող պատմական գիտության կործանման սկիզբը: Գրեթե նույն պատկերն է նաեւ տնտեսագիտության ասպարեզում, ուր նույնպես աշխատել է ակադեմիայի «ինքնապահպանման բնազդը», ինչը միանգամայն բնական է եւ արդարացված:

Երբ ոմանք, վկայաբերելով չընտրված թեկնածուների մի մասի կարծիքները, փորձում են տպավորություն ստեղծել, թե իբր ակադեմիայի անդամների ու թղթակից անդամների դեկտեմբերի 27-28-ի ընտրություններում տեղի են ունեցել համատարած անարդարություններ, որոնց հետեւանքով անցել են անարժանները, ակամայից սկսում ենք մտածել՝ տա այն մեծաթիվ պաշտոնյաների եւ գիտության հետ սոսկ հեռավոր առնչություն ունեցող ռեկտորների պատվերը չէ՞, որոնց իրավացիորեն ջնջել են «ծերակույտի» անդամները:

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ